ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

30-ը դեկտեմբերի 2015թ.

Քաջաան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2015 թվականի դեկտեմբերի 30-ին ժ.11^{00}-ին կայացած ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի

1. **2015 թվականին ՀՀ Տավուշի մարզում կատարված աշխատանքների և ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին**

   /զեկ. Հ.Աբովյան – ՀՀ Տավուշի մարզպետ/

2. **Մարզի համայնքների 2015թ. սեփական եկամուտների կատարառողականի մասին**

   /զեկ.Ռ.Ներսեսյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

3. **2015թ. դեկտեմբեր - 2016թ. հունվարի 11 ընկած ժամանակահատվածում ՀՀ Տավուշի մարզի միջպետական, հանրապետական և մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման ուղղությամբ կատարվելիք աշխատանքների մասին**

   /Զեկ.՝ Ա.Սարգսյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ/

4. **Այլ հարցեր**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

30.12.2015թ.

ք.Իջևան

Նիստը վարում էր ՀՀ Տավուշի մարզպետ Հ.Աբովյանը.
Մարզխորհրդի 63 անդամներից ներկա էին 59-ը:
Նիստին ներկա էին ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալները, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, պատասխանատու աշխատողներ:

1. 2015 թվականին ՀՀ Տավուշի մարզում կատարված աշխատանքների և ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

/Զեկ.՝ Հ. Աբովյան – ՀՀ Տավուշի մարզպետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ մարզի հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և միջազգային կազմակերպությունների համապատասխան ստորաբաժանումների համակարգված համագործակցությունների արդյունքում 2015թ. ապահովվել է տնտեսության տարբեր ճյուղերի բնականոն զարգացման ընթացքը :

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ Օրենքի 77.1-րդ և 77.2-րդ հոդվածների պահանջների կատարման կարգով և ղեկավարվելով ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 27.12.2014թ. թիվ 282-Ա <<Վարչական հսկողության 2015թ. աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին>> հրամանով նախատեսվել և ըստ եռամսյակների սահմանված գրաֆիկով իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 21 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ:

Հսկողության արդյունքների վերլուծությամբ պարզվել է, որ վերջին տարիներին մարզպետարան-համայնքների ղեկավարների աշխատակազմեր համագործակցությունը դրական արդյունք է տվել: Մասնավորապես. բարձրացել է համայնքային ծառայողների իրավական գրագիտությունն ու պատասխանատվությունը:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում նկատվել են հետևյալ հիմնական խախտումները.

Չի պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ 40-րդ և 41-րդ հոդվածների, <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի, <<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Չնայած նրան, որ բազմիցս համայնքների ղեկավարներին տրվել են գրավոր զգուշացումներ համայնքներում տրվող շինթույլտվությունների և ավարտական ակտերի օրինակները մարզպետարան ներկայացնելու համար, սակայն ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 91-Ն և 626-Ն որոշումների կարգը մարզի համայնքների մի մասում դեռևս չի պահպանվում:

2015թ. տեղի են ունեցել <<Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների>> և <<Համայնքների խոշորացման>> հանրաքվեներ, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ (Խաշթառակ, Իջևան, Վարագավան, Ակնաղբյուր և Ներքին Ծաղկավան համայնքի ղեկավարի, Խաշթառակ, Սարիգյուղ, Պառավաքար, Իջևան և Գետահովիտ՝ համայնքի ավագանու), որոնք անցել են կազմակերպված և բարձր մակարդակով, դիմում-բողոքներ չեն եղել:

ՀՀ Տավուշի մարզի համայնքներում 29.12.2015թ.-ի դրությամբ համայնքային ծառայողների փաստացի թիվը 318-է, որից 60-ը զբաղեցնում են համայնքային ծառայության գլխավոր, 60-ը առաջատար և 198 կրտսեր պաշտոններ:

<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի պահանջի համաձայն մարզի 71 համայնքային ծառայողներ ս/թ հունիսի 15-ից հուլիսի 9-ը Իջևան, Բերդ, Դիլիջան և Նոյեմբերյան քաղաքներում, չորս խմբերով, անցել են վերապատրաստման դասընթացներ: Գործընթացում ներգրավված են եղել ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված ցուցակում ընդգրկված դասընթացավարներ:

Դասընթացներն անց են կացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված վերապատրաստման ծրագրից բխող դասացուցակներին համապատասխան:

Վերապատրաստված չորս խմբերը կազմված են եղել 18 մասնակիցներից:

ՀՀ Տավուշի մարզի համայնքներում աշխատանքային հարաբերությունների ձևավորման սահմանված կարգի խախտման դեպքեր չեն արձանագրվել:

Սահմանված կարգով և ժամկետում համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների գրառվում է էլեկտրոնային գրանցամատյանում:

Մարզի գյուղական համայնքների մեծ մասում ապամոնտաժվել են նախկին անալոգային ավտոմատ հեռախոսակայանները, դրանք փոխարինվել են CDM-A տիպի թվային եթերային հեռախոսակապով: Այն ունի տեխնիկական հնարավորություն գյուղական համայնքներին ապահովելու հուսալի ինտերնետ կապով, որի շնորհիվ գյուղերում համացանցի ծառայությունից օգտվում են 4700 բաժանորդներ:

<<Արմենտելը>> միջոցներ է ձեռք առնում բջջային հեռախոսակապի ցանցը ընդլայնելու և կապի բարձր որակ ապահովելու համար: Թվայնացումից և վերազինումից հետո լարային ցանցով Hi-line-ի ինտերնետ կապից օգտվում է մոտ 9840 բաժանորդ:

Մարզի տարածքում բջջային որակյալ հեռախոսակապ է ապահովվում<<Արմենտել-Բիլայն>>, <<Վիվա-Սելլ>> և <<Օրանժ>> օպերատորների տեղադրած նորագույն սարքավորումների միջոցով:

Հայաստանի Հանրապետության փոստային կապի 'Հայփոստ-թրաստ' ԲԲԸ Տավուշի մարզի չորս փոստային մասնաճյուղերը սպասարկում են բոլոր 62 համայնքները: Գործում են 9 քաղաքային և 45 գյուղական փոստային բաժանմունքներ:

ՀՀ Տավուշի մարզում հեռուստահաղորդումներն իրականացվում են <<Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց>> ՓԲԸ Տավուշի տարածքային բաժնի կողմից՝ 33 թվային կայանների միջոցով: Հեռարձակվում են Հ-1, Հ-2, RTR-PLANETA, <<Արմենիա>>, <<Կենտրոն>>, <<Երկիր-Մեդիա>> և <<Շանթ>>, <<Շողակաթ>> և մարզային <<Տավուշ TV>> ծրագրերը: Հեռարձակվում է նաև <<Իջևան TV >> տեղական ծրագիրը:

Մարզի 7 գլխավոր կայանների վերազինմանը զուգահեռ կառուցվել են ներքոհիշյալ նոր թվային կայանները. Չինարի, Այգեձոր, Էրիձոր, Այգեստան, Արծվաբերդ, Մովսես, Նորաշեն, Տավուշ, Իծաքար, Չինչին, Դեբեդավան, Բարեկամավան, Կոթի, Գանձաքար, Ազատամուտ, Վազաշեն, Կիրանց, Հաղարծին, Թեղուտ, Ներքին Գոշ, Վերին Գոշ, Խաչարձան, Աղավնավանք, <<Լեռնային Հայաստան>>, Վասիլև, Բլդանչայ: Արդյունքում մարզի ամբողջ տարածքը ընդգրկվել է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում:

2015թ. մարզի տարածքում հիմնականում ապահովվել է անխափան և առցանց լուրջ վթարների էլեկտրամատակարարում: Այդ ընթացքում ,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ,, ՓԲԸ ,,Աղստև,, մասնաճյուղի միջոցով փոխարինվել է 685 հենասյուն (419 երկաթբետոնյա և 266 փայտյա), ամբողջությամբ վերանորոգվել է 205 10-6/0,4 կՎ ենթակայաններ (էլ. սարքավորումներ, տանիքներ,

ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ), գործող ցանցին են միացել 1 հատ 35/6 կՎ և 9 հատ 6-10/0,4 կՎ տրանսֆորմատորային ենթակայաններ, նորոգվել են մոտ 730 մ բարձր լարման և ավելի քան 7800 գծամետր ցածր լարման օդային գծեր, որոնց շուրջ 20 տոկոսը փոխարինվել է նորով:

Նոր սպառողների (բնակիչ-բաժանորդներ և այլ սպառողներ) էլ. մատակարարման համար կառուցվել են նոր 10-6-0,4-0,22 կՎ էլ. հաղորդման գծեր:

ՀՀ ֆինանսների նախարարության Դիլիջանի ուսումնական կենտրոնի անխափան էլ. սնուցման ապահովման նպատակով կառուցվել են 35/6 կՎ ենթակայան, վերակառուցվել և վերազինվել է 35/10 կՎ ,,Վանք,, ենթակայանը:

Նորոգվել են 110-35 կՎ 13 ենթակայաններ, որոնց մի մասում տեղադրվել են նոր բջիջներ և մոտ 31 կմ 110-35 կվ օդային գծեր:

2015թ. հարկադիր անջատումների քանակը նվազել է, որն արդյունք է մասնաճյուղի անձնակազմի արհեստավարժ աշխատանքի:

Մարզում գործում են 13 փոքր ՀԷԿ-եր, որոնց ընդհանուր դրվածքային հզորությունը կազմում է մոտ 19 ՄգՎտ:

Մարզպետարանի կողմից մարզի 6 չգազիֆիկացված համայնքների գազիֆիկացման խնդիրը ՀՀ Էներգետիկայի նախարարություն ներկայացվելուց հետո ընդգրկվել է 2016-2018թթ. ՄԺԾԾ-ում: 2013-14թթ. գազիֆիկացման աշխատանքներ են իրականացվել Նոյեմբերյանի տարածաշրջանի 9 և Իջևանի տարածաշրջանի 4 համայնքներում: Նշված բնակավայրերից գազիֆիկացման աշխատանքներն ավարտվել են Ոսկեպար, Բաղանիս, Ոսկևան, Կոթի, Բարեկամավան և Հովք համայնքներում, որոնց հանձնման-ընդունման /շահագործման/ աշխատանքներն ավարտվել են 2015թ.: Այժմ IFAD-ի ծրագրով գազիֆիկացվում են Դեբեդավան, Բագրատաշեն, Դեղձավան, Պտղավան, Ջուջևան, Խաչարձան, Գոշ, Աղավնավանք, Նավուր և Իծաքար բնակավայրերը, որոնց շինմոնտաժային աշխատանքները կավարտվեն 2016 թվականին: Բերքաբեր, Աճարկուտ և Կիրանց բնակավայրերում գազիֆիկացման աշխատանքներ դեռևս չեն իրականացվում:

Մարզի 19 բնակավայրերի գազիֆիկացման ավարտից հետո գազից կարող են օգտվել ևս 6000 բաժանորդներ:

Սերտ համագործակցություն է ապահովվում <<Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության>> հիմնադրամի հետ, մարզպետարանի աշխատակազմի համապատասխան պաշտոնատար անձինք մասնակցում են կազմակերպվող հանդիպում-քննարկումներին:

<<Գազպրոմ-Արմենիա>> -ը իր ֆինանսական միջոցների հաշվին ստորգետնյա վթարային հատվածների վերանորոգման և վերականգնման աշխատանքներ են իրականացրել մարզի Այրում, Դիլիջան և Իջևան քաղաքների մի շարք փողոցներում, ինչպես նաև Պառավաքար և Վ. Ծաղկավան համայնքներում:

Մարզի համայնքներում 2015թ. ընթացքում մասնավոր ներդրումների արդյունքում գազիֆիկացվել են 259 առանձնատներ: Ոչ պետական միջոցներով գազիֆիկացվել են ընդհանուր առմամբ 35 օբյեկտներ:

Ըստ <<Գազպրոմ-Արմենիա>> ՓԲԸ Տավուշի ԳԳՄ-ի տարեվերջյան տվյալների մարզի գազիֆիկացված համայնքների բաժանորդների թիվը նախորդ տարվա համեմատությամբ աճել է359-ով, հասնելով 26673-ի, որից բազմաբնակարան շենքերում 7600, իսկ առանձնատներում 18814:

Զեկուցողը անդրադարձավ քաղաքաշինության ոլորտին, նշելով, որ ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի թիվ 766- Ն որոշմամբ մարզին հատկացված 109360.0 հազ. դրամ պետական միջոցների հաշվին, և 2015 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1132-Ն որոշմամբ հատկացված 25000.0 գումարների սահմաններում Տավուշի մարզպետարանի կողմից կնքվել են պայմանագրեր նախագծային և շինարարական կազմակերպությունների հետ, իրականացվել են վերանորոգման աշխատանքներ: Նախատեսված աշխատանքները կատարված են ամբողջ ծավալով:

ՀՀ Քաղաքաշինության նախարարության պատվիրակությամբ 109761.301 հազար դրամի կատարվել են Իջևանի թիվ 1 դպրոցի վերանորոգման աշխատանքները:

Պետական միջոցներով իրականացված աշխատանքներից 83000,0 հազար դրամը ծախսվել է կրթական օբյեկտների վերանորոգման համար, 17000,0 հազար դրամը՝ բազմաբնակարան բնակելի տների տանիքների վերանոգման համար, 6000.0 հազար դրամը՝ մանկապարտեզների վերանորոգման համար, 25000.0 հազար դրամը Պտղավան համայնքում Դեբեդ գետի վրա նոր կախովի կամրջի կառուցման համար:

ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի 1361 – Ն որոշմամբ ուժեղ քամիների հետևանքով համայնքներին հասցված վնասների հետևանքները վերացնելու համար մարզին հատկացվել է 113.864 հազար դրամ:

Մարզում ՀՀ ԿԱ Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ ծրագրերով իրականացվում են 1276572,5 հազար դրամի ջրամատակարարման աշխատանքներ և 454844.7 հազար դրամի գազաֆիկացման աշխատանքներ:

Հ. Աբովյանն անդրադարձավ նաև առողջապահության ոլորտին, նշելով, որ 2016 թ-ին մարզի առողջապահական համակարգում մարզպետարանի ենթակայության գործում են 4 փակ բաժնետիրական ընկերություններ, 20 պետական ոչ առևտրային և 3 համայնքային ոչ առևտրային , ինչպես նաև 3 մասնավոր կազմակերպություններ՝ <Արևհատ և Անի ԸԲԱՊ> ՍՊԸ, <Իռ-Վինգ> ՍՊԸ և <Տավուշ բժշկական կենտրոն>-ը :

Մարզի համաճարակաբանական վիճակը նորմալ է, բարդացված դեպքեր չեն գրանցվել:

Իջևանի, Նոյեմբերյանի և Բերդի բժշկական կենտրոնները վերանորոգված և վերազինված են ժամանակակից սարքավորումներով և գործիքներով:Մարզի տարածքում գործում են 4 շտապ օգնության կայաններ:

2015թ-ի հուլիսի 8-ին Իջևանի ԲԿ-ում բացվեց ակնաբուժական կենտրոն: Կենտրոնը նպատակ ունի տրամադրել բազմաբնույթ ակնաբուժական ծառայություններ մարզի սոցիալապես խոցելի խմբերին պատկանող բնակիչներին, իսկ որ ամենակարևորն է ապահովելու է ակնավիրաբուժական ծառայություն:

2014թ-ին մասնավորեցվել է <Դիլիջանի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ն,վերանվանվելով <ԻՌ-ՎԻՆԳ> ՍՊԸ-ի:

Այսուհետ <ԻՌ-ՎԻՆԳ> ՍՊԸ-ն իրականացնում է տարածաշրջանի հիվանդանոցային, արտահիվանդանոցային/պոլիկլինիկա/ և շտապ օգնության ծառայությունը:

Նոյեմբերյանի ԲԿ-ի կազմում գործում է Հեմոդիալիզի բաժանմունքը՝ 12 մահճակալով և պոլիկլինիկական ծառայությունը,որը ունի 3 ընտանեկան բժիշկ, նեղ մասնագիտական և ախտորոշիչ բաժանմունքներ:

Նոյեմբերյանի տարածաշրջանում են գործում՝ Այրումի, Բագրատաշենի, Զորականի, Կողբի,Կոթիի , Բերդավանի և Ոսկևանի գյուղական բժշկական ամբուլատորիաները:

2015թ-ին կառուցվեցին Ոսկևանի և Բագրատաշենի ամբուլատորիաները և հիմնանորոգվեց Բերդավանի ԳԲԱ-ն:

Մարզի շտապ օգնության կայանների ավտոպարկը ունի թարմացման կարիք: Անհրաժեշտ է Իջևանի ԲԿ-ին և Բերդի ԲԿ-ին 2 –ական հատ Ուազ մակնիշի շտապ օգնության մեքենաներ:

Մարզի բուժհաստատությունների կադրային հագեցվածությունն ապահովելու համար անհրաժեշտ են՝ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, վիրաբույժ, քիթ-կոկորդ-ականջաբան վիրահատող, հոգեբույժ, նյարդաբան, համաճարակաբան, մանկաբարձ-գինեկոլոգ վիրահատող, վնասվածքաբան վիրահատող, ակնաբույժ վիրահատող, էնդոկրինոլոգ, ֆթիզիատոր, ընտանեկան բժիշկ, մանկաբույժ:

Զեկուցողը խոսեց նաև կրթության և մշակույթի բնագավառներում իրականացված աշխատանքների մասին, նշելով, որ կրթության քաղաքականությունը մարզում իրականացվել է <<Կրթության մասին>> ՀՀ օրենքի, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի, <<Հանրակրթության պետական կրթակարգի>>, միջնակարգ կրթության պետական չափորոշիչի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի, կրթության ոլորտի իրավական ակտերի, ՀՀ ԿԳՆ նախարարի սահմանած կարգերի համաձայն: Մարզի

հանրակրթական բոլոր դպրոցներում ձևավորված խորհուրդների կողմից հաստատվել են ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնները, քննարկել են ուսումնական հաստատությունների հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները, քննարկել են ուսումնական հաստատությունների ամենամյան ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը, ինչն էլ ներկայացվել է մարզպետարան: Հանրակրթական դպրոցներում խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում և դեպքերում: Համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի՝ Հայաստանի Հանրապետության <<Պետական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման>> կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 8-ի N 981-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 113-Ն հրամանով հաստատված հավելվածի՝ սկսվել է հանրակրթական ուսումնական հաստատության խորհուրդների կազմը վերանայելու գործընթացը:

Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ գործում է 77 հանրակրթական դպրոց, որտեղ սովորում է 15014 աշակերտ :

Առաջին դասարանցիների թիվը 2015-2016 ուս. տարում կազմում է 1737 աշակերտ:

77 դպրոցներում կոմպլեկտավորվել է 882 դասարան /նախորդ տարի՝ 860/, դասարանների միջին խտությունը կազմում է 17 /գյուղական փոքր դպրոցներում խտությունը շատ ցածր է, որի պատճառով առաջացել են երկկոմպլեկտ և եռկոմպլեկտ դասարաններ/:

Սահմանամերձ փոքր դպրոցները մշտապես գտնվում են ուշադրության կենտրոնում և դրական է այն, որ զգացվում է առաջին դասարանցիների աճի միտում:

Դպրոցում աշխատող ուսուցիչների թիվը հասնում է 1994-ի, որոնց հիմնական մասն ունի բարձրագույն կրթություն:

<< կառավարության 27.01.2011թ. թիվ 46-Ն որոշման համաձայն 2011թ-ից մարզի բոլոր դպրոցներն անցան ներառական կրթության համակարգի: Վերապատրաստումների, տեղերում կազմակերպված աշխատանքի, մեթոդական խորհրդատվությունների արդյունքում հաղթահարվեցին սկզբնական դժվարությունները: <<Ներառական կրթության>> մուտքով աշակերտները հայտնվեցին հասարակության ուշադրության կենտրոնում, բացի գիտելիքներ ստանալուց աշակերտը սկսեց պատկերացնել դերը հասարակական կյանքում: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները դարձան իրավահավասար բոլոր երեխաների հետ, տրվեց հնարավորություն բացահայտելու իր բոլոր ունակությունները, առավել ուշադրություն դարձվեց երեխայի ուժեղ կողմերը զարգացնելուն, որի արդյունքում երեխայի ընտանիքը դադարում է խուսափել իր երեխայի միջավայրի հետ շփումից:

<<Ներառական կրթության>> իրականացումը Տավուշի մարզում ցույց տվեց հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հասարակության լիիրավ անդամ դարձնելու անհրաժեշտությունը, որի արդյունքում շահում է ողջ հասարակությունը:

2015թ. ընթացքում Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից տրված եզրակացության հիման վրա վկայագրվել և ներառական կրթության համակարգում ընդգրկվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 102 երեխա:

2015թ. ընթացքում շարունակվել է մարզում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների եւ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց տվյալների շտեմարանների համալրումը:

Հաշվետու ժամանակահատվածում սոցիալապես անապահով ընտանիքների 27 երեխա ծնողների դիմումների հիման վրա տեղավորվել են Դիլիջանի<<Բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն>>-ում, 7-ը՝ <<ՍՕՍ- մանկական գյուղեր>>-ի Իջևանի մասնաճյուղում, 1-ը՝ Երևանի Մարի Իզմիրյանի անվան մանկատանը:

2015թ. ընթացքում շարունակվել է համալրվել կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների տեղեկատվական համակարգը: Ներկայումս համակարգ է մուտքագրվել 937 կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների մասին տվյալներ, որից 253-ը՝ 2015թ. ընթացքում:

Մարզպետարանը պարբերաբար համագործակցել է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության եւ տարածքային համապատասխան բաժինների հետ: Եռամսյակը մեկ մարզպետարան են ներկայացվել ոստիկանության կողմից հաշվառման վերցված անչափահասների վերաբերյալ տվյալներ: Համատեղ աշխատանքների արդյունքում զգալիորեն նվազել են իրավախախտման հակում ունեցող, դժվար դաստիարակվող, նախկինում դատապարտված անչափահասների թիվը: ԱԳԽ-ում հաշվառված 9 անչափահասները ընդգրկվել են մարտական սպորտարվեստի անվճար դասընթացներում: 2015թ. ընթացքում հաշվառման մեջ գտնվող անչափահասների շրջանում անցկացվել են պրոֆիլակտիկ կանխարգելիչ և դաստիարակչական բնույթի միջոցառումներ՝ նրանց կողմից կրկնահանցագործության դեպքերը կանխելու համար:

ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության ԱԳԽ ծառայողների կողմից սպասարկվող վարչական տարածքում անչափահասների շրջանում հանցագործությունների և իրավախախտումների դեպքերը կանխարգելելու, բացահայտելու, անչափահասների իրավական գիտելիքների իմացությունը բարձրացնելու, ինչպես նաև նրանց ռազմահայրենասիրական ոգով դաստիարակելու նպատակով ս/թ հունվարին տարածքներում գործող հանրակրթական դպրոցներում կազմակերպվել և անցկացվել են հանդիպումներ՝ նվիրված ՀՀ բանակի 23-րդ տարեդարձին: 2015թ. մայիսին դպրոցներում անցկացվել է <<Դասը վարում է ոստիկանը>> խորագրով դասաժամ՝ <<ՀՀ ոստիկանությունն այսօր>> թեմայով:

Պետբյուջեից հատկացված գումարի շնորհիվ վերանորոգվել են Կողբի թիվ 1 միջնակարգ, Ն.Ծաղկավանի միջնակարգ, Իջևանի թիվ 5 հիմնական, Գանձաքարի միջնակարգ, Դեղձավանի հիմնական, Արճիսի միջնակարգ դպրոցները: Կատարվել է Բարեկամավան համայնքի դպրոցի պատուհանների վերատեղադրում և պաշտպանիչ հենապատի կառուցում: Վերանորոգվել է նաև Իջևանի թիվ 1 հիմնական դպրոցի մարզադահլիճը, Աչաջրի մանկապարտեզի սանհանգույցը, Պտղավանի մանկապարտեզի սանհանգույցը և խոհանոցը:

Հանրակրթական ուսումնական հաստատություններին օգտագործման իրավունքով հանձնված շենքերից տարածք չի օտարվել: ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներից վարձակալությամբ տրված տարածքներ ունեն Սևքարի, Թեղուտի միջնակարգ և Դիլիջանի թիվ 2, Դիլիջանի թիվ 5 հիմնական դպրոցները: Թեղուտի և Սևքարի միջնակարգ դպրոցներից տրված տարածքները անհատույց օգտագործման են տրվել, իսկ Դիլիջանի թիվ 2 և Դիլիջանի թիվ 5 հիմնական դպրոցներից տրված տարածքների համար սահմանված են որոշակի վարձաչափեր:

Կրթության քաղաքականությունը մարզում իրականացվել է <<Կրթության մասին>> ՀՀ օրենքի, <<Հանրակրթության պետական կրթակարգի>>, միջնակարգ կրթության պետական չափորոշիչի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի, կրթության ոլորտի իրավական ակտերի, ՀՀ ԿԳՆ նախարարի սահմանած կարգերի համաձայն:

2015թ. մայիսի 29-ին ամփոփվել է <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթի մարզային փուլի արդյունքները: <<Տարվա լավագույն ուսուցիչ>> անվանակարգում հաղթող է ճանաչվել Արծվաբերդի միջնակարգ դպրոցի զինղեկ Գուրգեն Զարգարյանը, ով հաղթող է ճանաչվել նաև մրցույթի հանրապետական փուլում: <<Տարվա լավագույն տնօրեն>> անվանակարգում հաղթող է ճանաչվել Բերդի թիվ 3 հիմնական դպրոցի տնօրեն Ռուզան Թումանյանը, ով նույնպես հաղթող է ճանաչվել մրցույթի հանրապետական փուլում: <<Տարվա լավագույն դաստիարակ>> է ճանաչվել Սևքարի մանկապարտեզի դաստիարակ Ռուզաննա Մայիլյանը:

Կազմակերպվել է << Լավագույն զինղեկ>>, <<Լավագույն ռազմագիտության կաբինետ>> մրցույթը և տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Մարզի ուսումնական հաստատությունները 2015-2016 ուս. տարին սկսել են ՀՀ ԿԳ նախարարի 05.05.2014թ. թիվ 453-Ն հրամանով հաստատված օրինակելի ուսումնական պլանի համաձայն: Դպրոցների ֆինանսավորումն իրականացվել է՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների և ՀՀ կրթության նախարարների 2010թ. դեկտեմբերի 23-ի N 1730-Ն և 851-Ն հրամանները՝ <<2011 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին>>:

Ս/թ օգոստոսին անցկացվել է ուսուցիչների ամենամյա կոնֆերանսը, որտեղ ամփոփվեցին 2014-2015 ուստարվա ընթացքում կատարված աշխատանքները և 2015-2016 ուստարվա հիմնախնդիրները: Տրվել է կոնկրետ հանձնարարականներ՝ կատարվող աշխատանքները օրենսդրությանը համապատասխան իրականացնելու համար:

Յուրաքանչյուր տարի համաձայն <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին ատեստավորվել է ուսուցիչների թվաքանակի 1/5-ը: Ս/թ ամռանը կրթության ազգային ինստիտուտի Տավուշի մասնաճյուղում վերապատրաստվել է 317 ուսուցիչ, որոնց ատեստավորումը անցկացվել է 2015թ. նոյեմբերի 16-ից մինչև դեկտեմբերի 16-ն ընկած ժամանակահատվածում:

<<Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/ ստանալու քննության կազմակերպման, անցկացման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կրթության և գիտության նախարարի 18.05.2010թ. թիվ 395-Ն հրամանի համաձայն 2015թ. վերապատրաստվել և հավաստագրվել են 7 ուսուցիչ՝ որից մեկը դպրոցի տնօրենի պաշտոնակատար:

Ելնելով մարզի կրթության ներկա իրավիճակից՝ մարզի համար կրթության որակի և մատչելիության բարձրացումը դիտվում է մարզի զարգացման գերակա նպատակ: Քայլեր են կատարվում կառավարման մեխանիզմները կատարելագործելու և թափանցիկությունն ապահովելու ուղղությամբ: Մասնավորապես, դպրոցներում ուսուցիչների թափուր տեղերը համալրվում են մրցութային կարգով՝ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 02.08.2010թ. թիվ 1262-Ն հրամանի: Մրցույթների հայտարարությունները տեղադրվում են նաև մարզպետարանի պաշտոնական կայք էջում:

Մարզում գործում է 48 մանկապարտեզ՝ 3181 երեխաներով, որից 5-6 տարեկան՝ 1167 երեխա: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժական անձնակազմի թիվ 264 է, իսկ աշխատողների ընդհանուր թիվը 655 է: <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներն ապահովելու նպատակով համայնքապետերին առաջարկվել է հանձնարարել տնօրեններին աշխատանքին զուգահեռ հեռակա ուսուցմամբ ստանալ բարձրագույն կրթություն և համապատասխան գործընթացն արդեն սկսվել է: Նախադպրոցական ուսումնական հաստատությունները իրենց գործունեությունն իրականացնում են համաձայն ՀՀ կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի, առաջնորդվում են նախադպրոցական կրթության չափորոշիչներով: Ուշադրություն է դարձվում մանկապարտեզներում կիրառվող կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ձևերին և մեթոդներին: Նախադպրոցական ուսումնական հաստատությունները դիտարկվում են որպես կրթության կարևորագույն օղակ և աշխատանքներ են տարվում մանկապարտեզների, այդ թվում նաև նախակրթարանների և մանկապարտեզ հաճախող երեխաների թվի ավելացման ուղղությամբ: Մարզպետարանում քննարկվել է նաև համայնքային ենթակայության մանկապարտեզներում երեխաներին տրվող սննդամթերքի որակի, ինչպես նաև մանկապարտեզներում սանիտարա-հիգիենիկ նորմերի պահմանման հարցերը: Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի <<Տավուշ>>-ի մասնաճյուղի մասնագետների կողմից մարզի բոլոր մանկապարտեզներում կատարվել են ուսումնասիրություններ: Թերությունների վերացման նպատակով տրվել են համապատասխան հանձնարարականներ:

2015թ հուլիսի 22-ին Տավուշի մարզպետարանում անցկացվել է դասընթաց <<Նախադպրոցական ուսումնական հաստատություններում բժշկահիգիենիկ գիտելիքների ուսուցում և առողջ ապրելակերպի քարոզչություն >> թեմայով: Դասընթացը վարել են ՀՀ առողջապահության

նախարարության առողջապահական պետական տեսչության մասնագետները: Նրանք մանրամասն անդրադարձել են նախադպրոցական հաստատություններում երեխաների հետ տարվող աշխատանքներին: Սննդային գործոնով պայմանավորված զանգվածային վարակիչ հիվանդությունների սննդային թունավորումների առաջացման կանխարգելման նպատակով ներկայացվեց նախադպրոցական ուսումնական հաստատություններում արգելվող սննդամթերքների ցանկը: 2015թ. ընթացքում մարզի մի շարք մանկապարտեզների տնօրեններ և դաստիարակներ մասնակցել են Ճգնաժամի կառավարման ակադեմիայում կազմակերպված <<Երեխաների անվտանգության մշակույթի ձևավորման հարցերի>> վերաբերյալ դասընթացին:

Մարզի բոլոր մանկապարտեզներն ընդգրկված են <<Քայլ առ քայլ>> հիմնադրամի ծրագրում:

Մարզում գործում են 4 պետական քոլեջ և 1 արհեստագործական դպրոց: Աշխատաշուկայի ուսումնասիրության արդյունքներով, ինչպես նաև ուսումնական հաստատությունների ընդունելության տեղերի և մասնագիտությունների ցանկը մարզպետարանում քննարկելուց և անհրաժեշտ վերլուծություններից հետո նախարարություն է ներկայացվում յուրաքանչյուր տարվա անհրաժեշտ մասնագիտությունների ցանկը: Հիմնական նպատակն է ապահովել որակյալ մասնագետների պատրաստում, նրանց կարողությունների և հմտությունների կայացման ուղղությամբ արդյունավետության բարձրացում: Խնդիր է դրվել ապահովել ժամանակակից անհատի և քաղաքացու ձևավորումը, ժամանակակից աշխատաշուկայում նրանց տեղն ապահովելու առումով:

<<Գլոբալ զարգացումներ>> հիմնադրամի և <<Եվրոպական կրթական>> հիմնադրամի աջակցությամբ իրականացվել է հետազոտություն, որի նպատակն է բացահայտել աշխատաշուկայում առկա պահանջարկը նախնական և միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների հմտությունների և կարողությունների նկատմամբ: Միջնակարգ կրթության պարտադիր լինելու լինելու պահանջն ավելացրել է հոսքը դեպի քոլեջներ և ուսումնարան:

Մարզի հանրակրթական դպրոցներում 2015թ. ընթացքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ մասնավորապես, նվիրված Հայոց եղեռնի 100 -ամյա տարելիցին: Այդ շրջանակներում անցկացվել է <<Պաստառի և պատի թերթի փառատոն>>: Հանրապետական փուլում հաղթող են ճանաչվել Դիլիջանի և Նոյեմբերյանի ավագ դպրոցների աշակերտները: Մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում <<Հիշում եմ և պահանջում>> խորագրի ներքո անցկացվել է բաց դասեր՝ նվիրված Եղեռնի 100-ամյա տարելիցի համահայկական հուշակագրին, գրվել են շարադրություններ:

Կազմակերպվել են ուխտ-երթեր դեպի Ծիծեռնակաբերդ: Դպրոցներն ակտիվորեն մասնակցել են անմոռուկների պատրաստման աշխատանքներին:

Բարձր մակարդակով կազմակերպվել են Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակին նվիրված միջոցառումները: Անցկացվել են <<Արիության դասեր>>, գրական ցերեկույթներ, տոնակատարություններ: 8-12 դասարաններում գրվել են շարադրություններ <<Մենք հաղթանակի սերունդն ենք>>թեմայով: 5 շարադրություն ներկայացվել է ՀՀ ԿԳՆ: Անցկացվել է հաղթանակի 70-ամյակին նվիրված՝ ռուսերենով գրված, շարադրությունների մրցույթ:

2015թ. Ընթացքում Տավուշի մարզում իրականացվել է <<Մշակութային կազմակերպություն-դպրոց>> աբոնեմենտային համակարգի ներդրման պիլոտային ծրագիրը, որում ընդգրկված էին սահմանամերձ 23 դպրոց՝ 1700 աշակերտով: Ծրագրի շնորհիվ սահմանամերձ դպրոցների աշակերտները հնարավորություն ստացան շփվելու մշակութային արժեքների հետ:Ծրագիրը ներառում է երեք միջոցառում՝ մեկ ներկայացում, մեկ համերգային ծրագիր և մեկ թանգարանային երկօրյա այցելություն:

2015թ. մարզում պատշաճ մակարդակով նշվել են նաև Հայաստանի Հանրապետության պետական բոլոր տոները՝ <<Սուրբ ծնունդ>>, <<Բանակի օր>>, <<Կանանց, մայրության, գեղեցկության և սիրո>> տոներ, <<Ծաղկի և երգի տոն>>, <<Հաղթանակի և խաղաղության տոն>>, <<Շուշիի ազատագրման օր>>, <<Հանրապետության տոն>>, <<Երեխաների

իրավունքների պաշտպանության օր>>, <<Վերջին զանգ>>, <<Գիտելիքի, գրի և դպրության օր>>, <<Գրքի օր>>, <<Վարդանանց տոնը>>, որի ընթացքում մեծ զորավար Վարդան Մամիկոնյանի ծառի մոտ հայրենիքին անմնացորդ ծառայելու երդում են տալիս զինակոչիկները, իսկ ժողովուրդը նրանց օրինում, բարի ծառայություն և բարի վերադարձ է մաղթում:

<<Մեր մեծերը>> խորագրի տակ հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացվել են միջոցառումներ նվիրված Ոսկան Երևանցու 400-ամյակին, Համո Սահյանի 100-ամյակին, Հովհաննես Շիրազի 100-ամյակին, Թորոս Թորամյանի 150-ամյակին: Անցկացվել է Փարաջանովի <<Հետադարձ լույսը>> խորագրով ցուցահանդես:

Հանրակրթական դպրոցներում անցկացվել է <<Երկնքից երեք խնձոր ընկավ>> խորագրով բարբառով հեքիաթասացի փրցույթ-փառատոն: Ընթացիկ տարում հանրակրթական դպրոցներում անցկացվել է <<Մայրենի լեզվի օր>> խորագրով միջոցառումներ:

2015թ. մարզի հանրակրթական դպրոցներում անցկացվել է Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում կրթական, մշակութային, գեղարվեստական միջոցառումների շարք:

Կազմակերպված են անցել <<Ազգային ժողովի>> գավաթի դպրոցականների մրցաշարը, դպրոցականների շախմատի օլիմպիադաները:

Ս/թ. փետրվարի 19-ին՝ Հ. Թումանյանի ծննդյան օրը հայտարարվել էր <<Գիրք նվիրելու օր>>: Այդ օրը մարզում տեղի է ունենացել բազմաթիվ հանդիպումներ անվանի գրողների հետ, ինչպես մարզի հանրակրթական դպրոցներում: 2014-2015 ուստարվա ընթացքում <<Երգը բարեկամության կամուրջ է>> խորագրով ռուսական երգի երրորդ փառատոնի հանրապետական փուլում հաղթող է ճանաչվել Իջևանի թիվ 1 հիմնական դպրոցի 7-րդ դասարանի աշակերտ Բենիամին Ղալումյանը, որն արժանացել է դափնեկրի դիպլոմի:

ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ մշակույթի նախարարության և <<Անտարես>> հրատարակչության նախաձեռնությամբ հանրակրթական դպրոցների 6-րդ դասարանցիների համար անցկացված <<Ընթերցման օլիմպիադա 2015>> հանրապետական փուլին մասնակցել է Իջևանի թիվ 1 հիմնական դպրոցի աշակերտ Միքայել Մխիթարյանը, ով արժանացել է հատուկ մրցանակի և բազմաթիվ նվերների:

Ս/թ նոյեմբերի 28-ին մարզկենտրոնում անցկացվեց ասմունքի մանկապատանեկան 9-րդ մրցույթ-փառատոնի մարզային փուլը՝ նվիրված Վահագն Դավթյանի և Գևորգ Էմինին:

Մարզի հանրակրթական բոլոր դպրոցներում 2015թ. ընթացքում ստեղծվել են <<Պատանի երկրապահ>> ակումբներ՝ 1396 անդամով: 560 աշակերտ մասնակցել է սերժանտական դասընթացների, ովքեր դասընթացի ավարտին հանձնելով ստուգարքներ, ստացել են սերժանտական վկայականներ:

Կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության 24-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 24-րդ մարզային խաղերի դպրոցական փուլը:

Կազմակերպվել է ֆիզկուլտուրայի ուսուցիչների սեմինար, մասնակցությամբ ԿԳՆ և ֆուտբոլի մասնագետների: Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ դպրոցներին տրված պարտադիր կատարման հանձնարարականի համաձայն սեպտեմբերի 1-ի՝ <<Գիտելիքի օրվան>> նվիրված միջոցառումները սկսվել են ուսուցիչների երդման հանդիսավոր արարողությամբ:

Աջակցել ենք կրթական <<Այբ>> կրթական հիմնադրամին <<Կենգուրու>> միջազգային մաթեմատիկական մրցույթի կազմակերպման համար: Ս/թ դեկտեմբերին անցկացվել է <<Ամենախելացին>> մրցույթը, որին մասնակցել է 90 աշակերտ, հաղթող է ճանաչվել 5 աշակերտ: <<Ամենախելացին>> հեռուստախաղի 2-րդ եթերաշրջանում հաղթող է ճանաչվել Իջևանի ավագ դպրոցի 11-դասարանի աշակերտ Արման Բայրամյանը:

Աջակցել ենք դպրոցներին ավարտական դասարանների ռազմադաշտային պարապմունքների կազմակերպման համար:

Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում 2015 թվականի ընթացքում անցկացվել են սպորտլանդիաներ: Ս/թ մայիսին անցկացվել է նախադպրոցական

ուսումնական հաստատությունների մարզային փուլը, որում հաղթող է ճանաչվել Իջևանի թիվ 1 մանկապարտեզը: Իսկ դպրոցականների սպորտլանդիաների մարզային փուլում է հաղթող է ճանաչվել Իջևանի թիվ 4 հիմնական դպրոցը:

2015թ. անցկացվել է նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերը. 1-ին փուլին մասնակցել է 2040 աշակերտ, 2-րդ փուլին՝ 1480, իսկ 3-րդ փուլին՝ 72 աշակերտ: Հանրապետական փուլում վել Արծվաբերդի միջնակարգ դպրոցը գրավել է 4-րդ տեղը:

2015թ. անցկացվել է շախմատի օլիմպիադա, որին մասնակցել են մարզի հանրակրթական գրեթե բոլոր դպրոցները:

2015թ. ընթացքում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի և ՀՀ ՏԿԱԻ նախարարության հետ համատեղ Դիլիջանում անցկացվել է <<Համայնքային երիտասարդ առաջնորդների ձմեռային ճամբար>>: Ճամբարի նպատակն էր խթանել 16-30 տարեկան երտասարդների ներգրավվածությունն իրենց համայնքների քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային կյանքում, զարգացնել մարզերի երիտասարդների կարողությունները, գիտելիքներն ու հմտությունները տեղական ինքնակառավարման, մասնակցային կառավարման և հավասար իրավունքների ու հնարավորությունների ոլորտներում:

Ս/թ օգոստոսի 17-23-ը Ծաղկաձորում կայացած <<Բազե -2015>> համահայկական ամենամյա երիտասարդական հավաքին ակտիվորեն մասնակցել է Տավուշի մարզը ներկայացնող <<Տավուշ>> ջոկատը, որն ընդգրկված էր Կապույտ ճակատում: Մասնակիցները պարգևատրվել են գավաթով, պատվոգրերով և արծաթե մեդալով /ֆուտբոլից/:

Տուրիզմի միջազգային օրվան նվիրված տուրիստական էքսպոյին մասնակցել է նաև Տավուշի մարզը: Տավուշի երիտասարդները Տավուշի տաղավարում ցուցադրել են տարածաշրջանի առավել հայտնի ուտեստները, բերքն ու բարիքը, երգն ու պարը՝ համեմված մշակութային առանձնահատկություններով:

Ժամանակին ստացվել և հանրակրթական դպրոցներին բաշխվել են դասագրքերը: ՈՒսումնասիրվում և ԴՇՀ է ներկայացվում յուրաքանչյուր ուսումնական տարում անհրաժեշտ դասագրքերի պատվերը, վերահսկողություն է սահմանվում դասագրքերի վարձավճարների հավաքագրման գործընթացի նկատմամբ:
Տավուշի մարզպետի 20.10.2015թ. թիվ 202-Ա որոշմամբ փոխհատուցվել է սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարները:

Մարզի բոլոր հանրակրթական դպրոցներն ապահովված են ինտերնետ կապով և անհրաժեշտ սարքավորումներով: Ինտերնետ կապի և սարքավորումների խափանման դեպքերում՝ դպրոցների տնօրենների դիմումների հիման վրա, ԿՏԱԿ-ի համապատասխան մասնագետների կողմից ցուցաբերվել է անհրաժեշտ օգնություն՝ կապի վերականգնման և սարքավորումների փոխման հարցում:

Միջդպրոցական ինտերակտիվ ցանցի՝ dasaran.am-ի միջոցով դպրոցները վարում են էլեկտրոնային մատյաններ և արդյունավետությունը չափող էլեկտրոնային համակարգի միջոցով ամեն ամիս չափվել է ուսուցիչների կողմից կատարված աշխատանքների արդյունավետության մակարդակը: Այս համակարգը ծնողներին տալիս է ուսուցչական անձնակազմի կատարած աշխատանքներին ծանոթանալու թափանցիկ և մատչելի հնարավորություն՝ միևնույն ժամանակ մեծացնելով համակարգչային գիտելիքների նկատմամբ հետաքրքրությունը:
2015թ.-ի ընթացքում, ինտերնետ կապի միջոցով <<Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգից /SMIS/>> օգտվել է Տավուշի մարզի 81 դպրոց: <<Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգը>> նախատեսված է կրթական հաստատություններում միասնական տեղեկատվական միջավայրի ձևավորման համար: Համակարգը թույլ է տալիս կազմակերպել և օպերատիվ կառավարել կրթական գործընթացը, ինչպես նաև իրականացնել կրթական հաստատության գործառույթների վարչական կառավարումը:

Ժամանակին կազմակերպվել են 2015-2016 ուստարվա <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին>> վարչական վիճակագրական հաշվետվությունների թղթային և էլեկտրոնային տարբերակներով հավաքման, ստուգման և տեղեկատվության մուտքագրման աշխատանքները: ԿՏԱԿ է ներկայացվել դպրոցների վարկանիշավորում անցկացնելու համար դպրոցների կողմից ներկայացված հարցաշարերը:

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի շարժական ինտերնետային համակարգչային կայանը 2015թ. ընթացքում այցելել է Խաչարձանի միջնակարգ և Լուսահովիտի հիմնական դպրոցներ: Դպրոցի աշակերտներին և ուսուցիչների համար անց է կացվել դասընթացներ համակարգչային ծրագրերի վերաբերյալ:

ԿՏԱԿ-ի կողմից՝ Իթվինինգ պլյուս ծրագրի շրջանակներում ազգային հավաստագրի արժանանալու համար անցկացվող մրցույթին մասնակցել են մի շարք դպրոցներ:

Կրթության բնագավառում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները և միջոցառումները տեղադրվել են մարզպետարանի կայքում: Մարզպետարանի կայքում պարբերաբար տեղադրվում են նաև դպրոցների տնօրենների և ուսուցիչների թափուր պաշտոնների համար անցկացվող մրցույթների վերաբերյալ հայտարարությունները: Կրթության բնագավառում մարզպետարանի գործունեության հաշվետվությունը տեղադրվում է մարզպետարանի կայքում:

Կրթության բնագավառում մարզպետարանի գործունեության մասին տեղեկատվությունը մշտապես հրատարակվում է <<Տավուշ>> մարզային թերթում, որտեղ նույնպես հրատարակվում է դպրոցների տնօրենների և ուսուցիչների թափուր պաշտոնների համար անցկացվող մրցույթների վերաբերյալ հայտարարությունները:

Համագործակցում ենք Իջևանում և Նոյեմբերյանում գործող տեղական հեռուստատեսային ստուդիաների, ինչպես նաև <<Տավուշ>> մարզային հեռուստատեսային ստուդիայի հետ, որոնց տրամադրվում է տեղեկատվություն կրթության բնագավառում կատարվող աշխատանքների վերաբերյալ:

Հանրակրթական դպրոցներում անցկացված միջոցառումների վերաբերյալ նյութերը տեղադրվում են մարզպետարանի, ԿՏԱԿ-ի և դպրոցների կայքերում: Մարզի հանրակրթական մի շարք դպրոցների համար ԿՏԱԿ-ի կողմից ստեղծվել է վեբ կայքեր, որը հնարավորություն է տալիս տեղեկատվություն ստանալ դպրոցների մասին:

Զեկուցողը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում մարզում կազմակերպվել են Հայաստանի Հանրապետության պետական բոլոր տոները՝ <<Բանակի օր>>, <<Կանանց, մայրության, գեղեցկության և սիրո>> տոներ, <<Հաղթանակի և խաղաղության>> տոն, <<Շուշիի ազատագրման օր>>, <<Հանրապետության տոն>>, <<Երեխաների իրավունքների պաշտպանության օր>>, <<Գիտելիքի, գրի և դպրության օր>>, <<Անկախության 24-ամյակ>>-ին նվիրված տոներ, նշվել է Մեծ եղեռնի 100-րդ տարելիցը, երկրաշարժի տարելիցը և այլն:

Մարզի բոլոր կրթական հաստատություններում անց են կացվել <<Ոսկե աշուն>> խորագրով միջոցառումներ: Նշվել են եկեղեցական <<Սուրբ ծնունդ>>, <<Սուրբ Սարգիս>> /Երիտասարդների օրհնության օր/, <<Տյարնընդ առաջ>>, <<Սուրբ Զատիկ>>, <<Խաղողօրհնեք>> տոները: Կազմակերպվել և անց են կացվել <<Ծաղկի և երգի>>, <<Վերջին զանգ>>, <<Երիտասարդական ուսանողական փառատոն>>, <<Պահպանենք մեր ավանդույթները>>, <<Մարզային մշակութային փառատոն>> խորագրերը կրող և այլ զանգվածային միջոցառումներ:

2015թ. օգոստոսի 29-ին Դիլիջանում կազմակերպվել է <<Մշակութային վերածնունդ>> գորգերի և դեկորատիվ կիրառական արվեստների ավանդական 3—րդ փառատոնը, որին մասնակցել են ՀՀ բոլոր մարզերի և Արցախի պատվիրակությունները:

Յուրաքանչյուր համայնք նշել է արդեն ավանդույթ դարձած իր բնակավայրի հիմնադրման օրը: Միջոցառումներն ուղեկցվել են ծառատունկերով:

Կազմակերպվել են մասսայական միջոցառումներ ցուցահանդեսների, ցուցահանդես-վաճառքների ուղեկցությամբ: Ցուցադրություններ են կազմակերպվել թանգարաններում, արվեստի և գեղարվեստի դպրոցների ցուցասրահներում:

Դիլիջանի մշակույթի պալատում ստեղծվել է հայկական ժողովրդական երգի <<Արթուր Քեթցյան>> մանկական ուսուցողական ստուդիան:

Իջևանի մշակույթի տանը կազմակերպվել «Կյանքը՝ հանուն կյանքի» և «Մասունքներ» գրքերի շնորհանդեսները:

Իջևանի Փյունիկ պարային համույթը մասնակցել է Եռաբլուրում կազմակերպված Վազգեն Սարգսյանի ծննդյան օրվան նվիրված միջոցառմանը:

Մարզային գրադարանը համալրվել է 1246 միավոր գրականությամբ, 9 անուն պարբերական մամուլով, գյուղական գրադարանները՝ 1241 միավոր գրականությամբ:

2015թ. 3 տարի ժամկետով ՀՀ Պատմական միջավայրերի պահպանության ծառայության պատմամշակութային արգելոց թանգարանից Դիլիջանի թանգարան-պատկերասրահ է տեղափոխվել դիլիջանցի գեղանկարիչների 40 ստեղծագործություններ /<<Հին Դիլիջան>> խորագրով/:

Գրադարաններում անց են կացվել Ազգային գրադարանային շաբաթի, Գրադարանավարի օրվա, Գրադարանային երեկոյի, Թարգմանչաց տոնի, Մայրենի լեզվի միջազգային օրվա, Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված դասախոսություններ, գրական- գեղարվեստական ցերեկույթներ, հոբելյանական տարեթվերի կապակցությամբ ցուցահանդեսներ և այլ միջոցառումներ:

Իջևանի մարզային գրադարանի կողմից հրատարակվել է ՀՀ Տավուշի մարզում բնակվող ցեղասպանություն ապրածների ժառանգների հուշերը <<Ցեղասպանություն-100>> խորագրով, լուծվել է գրադարանի լոկալ ջեռուցման խնդիրը:

Մշակութային ժառանգության պահպանմանը նպաստելու նպատակով՝ Դիլիջանի մշակույթի պալատում 520 քառ. մետր տարածք է հատկացրել Գրադարանների կենտրոնացված համակարգին գրապահոցներ կահավորելու համար:

Ֆոնդադարաններ են ստեղծվել Դիլիջանի երկրագիտական թանգարան-պատկերասրահում, ընթացքի մեջ է թանգարանի հնագիտության, ազգագրության, Դիլիջանի պատմության բաժինների էքսպոզիցիոն աշխատանքները, որը կավարտվի 2016թ. առաջին եռամսյակում:

Մարզի գրադարաններն ակտիվորեն արձագանքել են բոլոր հիշարժան տարեթվերին և իրադարձություններին:

Թանգարաններից յուրաքանչյուրն առանձին ծրագրով անց է կացրել նաև <<Թանգարանային գիշեր>> միջոցառումների շարք, ինչն էլ ուղեկցվել է ցուցահանդեսներով:

Կազմակերպվել են վարպետաց դասեր՝ գորգագործություն, կարպետ, ասեղնագործություն, կրթական ծրագրեր են իրականացվել դպրոցականների հետ:

Մարզի որոշ գրադարաններում և թանգարաններում կան համակարգիչներ , տպիչ սարքեր, ունեն ինտերնետ կապ:

Դիլիջանի երկրագիտական թանգարանում տեղադրվել են տեսախցիկներ:

Իջևանի Վերնատուն պատկերասրահը ամբողջությամբ համալրվել է ժամանակակից տեխնիկայով:

2015թ. կյանքի կոչվեց Նոյեմբերյանի ժող. թատրոնը: Մարզպետի աջակցությամբ թատերախումբը շրջագայել է Նոյեմբերյանի տարածաշրջանի սահմանամերձ համայնքներում:

ՀՀ Կոմպոզիտորների միության հետ համատեղ Դիլիջանում կազմակերպվել են Հայաստանում անցկացվող <<Երգի փառատոն-2015>>-ի 2-րդ և 3-րդ փուլերը: <<Հայ-էկվադորական բարեկամության>> ՀԿ-ի հետ համտեղ բացօթյա ամֆիթատրոնում կազմակերպվել է Էկվադորի ֆոլկլորային անսամբլի ելույթը:

Գեղագիտական դաստիարակության մատչելիության համար այն համայնքները, որտեղ գործում են համապատասխան կրթական կառույցներ, կիրառվում է տարբեր զեղչերի համակարգ:

Վերակառուցվել է Դիլիջանի Հովի. Շարամբեյանի անվան մանկական գեղարվեստի դպրոցի դահլիճ-ցուցասրահը /14415.0հազ.դրամ/, մշակութային կազմակերպությունների համար ձեռք են բերվել 11400.0 հազ.դրամի գույք և սարքավորումներ:

Մարզի շատ համայնքների մշակույթի տներում գործում են տարբեր բնույթի խմբակներ որոնք մատչելի են բոլորին /կան կենտրոններ, որոնք ուսուցումը կազմակերպում են անվճար և առանց տարիքային սահմանափակման/:

Մարզի շատ շնորհալիներ մասնակցություն են ունեցել միջազգային բազմաթիվ մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների, շարադրությունների մրցույթների, նկարների և լուսանկարների մրցույթների՝ արժանանալով մրցանակների ու խրախուսանքների:

Բրուտագործական սարքավորումներ են ձեռք բերվել Դիլիջանի գեղարվեստի դպրոցի համար:

Իջևանի միջնակարգ երաժշտական դպրոցում բացվել է քյամանչայի դասարան, ձեռք է բերվել նոր գործիք, դպրոցում ձևավորվել է երկու երգչախումբ:

Կողբի մշակույթի կենտրոնի համար ձեռք են բերվել ձայնահզորացուցիչ սարքավորումներ և խոսափողեր:

Կողբի արվեստի դպրոցում կահավորվել է խեցեգործության դասարան՝ անհրաժեշտ բոլոր սարքավորումներով և գույքով:

Փոխվել են Այգեհովիտի մշակույթի տան բոլոր դռները և պատուհանները, սկսել է գործել ժող. գործիքների խմբակ:

Դրամական միջցներ է տրամադրվել ՀՀ կառավարության ծրագրում ներառված «Մշակութային կազմակերպություն-դպրոց» աբոնեմենտային համակարգի ներդրման պիլոտային ծրագրի Երևանում իրականացվող միջոցառումների պատշաճ կազմակերպման նպատակով մարզից տեղափոխվող երեխաներին տրանսպորտային միջոցներով ապահովելու համար:

Մարզում կազմակերպվել են կրկեսային ներկայացումներ, ինչպես մշակույթի պալատներում, այնպես էլ դպրոցներում, Դիլիջանի ամֆիթատրոնում /Երևանի Պետական կրկես/:

Մարզում գործող թատերախմբերի /Դիլիջանի, Նոյեմբերյանի, Բերդի, Կողբի/ կողմից բեմադրվել և հանդիսատեսի դատին են ներկայացվել բազմաթիվ պիեսներ, դրամատիկական նովելներ, հեքիաթներ:

Մարզի տիկնիկային թատերախմբերը ելույթներով հանդես են եկել ինչպես մարզի համայնքներում, այնպես էլ այլ մարզերի համայնքներում, Երևանում:

Օգոստոսին <<Մինասի գույներով>> խորագիրը կրող <<Երիտասարդ նկարիչների միջազգային երրորդ պլեներ>>-ին մարզից մասնակցել են երեք երիտասարդ նկարիչներ:

Եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում, Ոսկեվան, Բաղանիս, Վերին Կարմիրաղբյուր, Թեղուտ համայնքներում բացվեց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշաքար-կոթողներ:

Զորական համայնքում մայիսին կայացավ մեծ զորավարներ՝ Հովհաննես Բաղրամյանի և Համազասպ Բաբաջանյանի կիսանդրիների բացումը:

Օժանդակություն էցուցադրվել մշակութային օբյեկտների կառուցման աշխատանքներին:

Դիլիջանի մշակույթի պալատի շենքի հիմնանորոգման խնդիրը բազմիցս ներկայացվել է Լիազորված պետական մարմիններին, տարբեր կազմակերպությունների կողմից մի քանի անգամ կատարվել են շենքի չափագրման, հետազոտման աշխատանքներ, սակայն հարցին լուծում չի տրվել:

Մարզային լրատվությամբ և հեռուստատեսությունների միջոցով պարբերաբար թե տեղեկատվություն է տրվում և , թե կազմակերպվում են ցուցադրություններ համայնքի տարածքում բնակվող ստեղծագործողների, կազմակերպված մշակութային միջոցառումների վերաբերյալ: Տեղեկատվությունը տեղադրվում է նաև մարզպետարանի և համայնքների կայք-էջերում:

Զեկուցողը ներկայացրեց, որ Տավուշի մարզն ընդգրկում է 152.6կմ միջպետական նշանակության, 336.8 կմ հանրապետական նշանակության և 300,1 կմ մարզային /տեղական/ նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ:

Տավուշի մարզի Իջևանի, Բերդի, Նոյեմբերյանի, Դիլիջանի տարածաշրջաններում <Տավուշի ՃՇՇ> ՓԲԸ, <Իջևանի ՃՇՇ> ՓԲԸ, <Լևոն երկրորդ> ՍՊԸ, <Հաղարծին> ՓԲԸ կազմակերպությունների կողմից սպասարկվում են 145.7կմ միջպետական, 321,0 կմ հանրապետական և 103,4 կմ մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհներ:

2015թ. ՀՀ պետական բյուջեով միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար նախատեսվել է 539.4 մլն դրամ գումար: Նշված ծրագրի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ իրականացվում է 466,7 կմ երկարությամբ ավտոճանապարհների ձմեռային պահպանության աշխատանքներ:

2015թ. ՀՀ պետական բյուջեով Տավուշի մարզի մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների համար նախատեսվել է 76.500 մլն. դրամ գումար: Նշված ծրագրի շրջանակներում Տավուշի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվում է 103.4 կմ երկարությամբ ավտոճանապարհների ձմեռային պահպանության աշխատանքներ:

2. Մարզի համայնքների 2015թ. սեփական եկամուտների կատարողականի մասին

/Զեկ.՝ Ռ.Ներսեսյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

Ռ. Ներսեսյանը նշեց, որ 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ մարզի համայնքների եկամուտների փաստացի մուտքը կազմել է 3480.1 մլն. դրամ, որը կազմում է տարեկան նախատեսվածի 98.5 %-ը, իսկ սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 657.1 մլն. դրամ կամ կատարվել է 92.2 %-ով:

Ըստ առանձին եկամտատեսակների սեփական եկամուտների կատարողականները ս/թ դեկտեմբերի 30-ի դրությամբ հետևյալն է.

- հողի հարկ – 2015 թ. տեղական բյուջեով նախատեսվել է 183.1 մլն. դրամ, հավաքագրվել է 158.4 մլն. դրամ կամ կատարվել է 86.5 % - ով, թերհավաքագրումը կազմել է 24.7 մլն. դրամ:

Հողի հարկի մասով ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Հաղթանակ 21.1 % (19.6 %), Զորական 61.1 %(41.5 %), Գետահովիտ 66.0 % (64.7 %), Նորաշեն 66.1 % (58.8 %), Վ. Ծաղկավան 69.5 %(67.5 %) և այլ համայնքներ (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը),

- գույքահարկ - 2015 թ. տեղական բյուջեով նախատեսվել է 252.7 մլն. դրամ, հավաքագրվել է 253.4 մլն. դրամ կամ կատարվել է 100.2 %-ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Վազաշեն 57.4 % (53.7 %), Այգեհովիտ 60.1 % (53.2 %), Կիրանց 62.7 %(56.8%), Գետահովիտ 66.2 %(63.1 %), Լուսահովիտ 73.7 %(71.3%), Այգեպար 75.7 %(69.4%) և այլ համայնքներ (կցվում է ցանկը),

- տեղական տուրքեր –2015 թ. տեղական բյուջեով նախատեսվել է 38.5 մլն. դրամ, հավաքագրվել է 34.7 մլն. դրամ կամ կատարվել է 90.1 %-ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Ենոքավան 34.4 % (34.4%), Աչաջուր 38.0 % (37.5 %), Վ.Կ.Աղբյուր 45.2 %(21.4 %), Բերդավան 51.6 % (51.6 %), և այլ համայնքներ (կցվում է ցանկը):

- գույքի վարձակալությունից եկամուտներ – 2015 թ. տեղական բյուջեով նախատեսվել է 99.6 մլն. դրամ, հավաքագրվել է 87.4 մլն. դրամ կամ կատարվել է 87.7 %-ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Իծաքար 26.1 % (26.1 %), Արծվաբերդ 28.7 % (28.5%), Վ. Ծաղկավան 41.8 % (40.6%), Խաշթառակ 42.2 % (42.2%), Բերքաբեր 46.6 % (46.6%), Նավուր 49.1 % (49.1%) և այլ համայնքներ (կցվում է ցանկը):

ՀՀ կառավարության 26.02.2015 թ. թիվ 171-Ն որոշմամբ մարզի սահմանամերձ 23 համայնքների հողի հարկի և գույքահարկի փոխհատուցման նպատակով ցուցաբերվել է 57,1 մլն. դրամի պետական աջակցություն, որը ս/թ նոյեմբերի 17-ի դրությամբ ամբողջությամբ հատկացվել է:

Ս/թ դեկտեմբերի 30-ի դրությամբ հատկացված գումարների մուտքագրման վերաբերյալ տեղեկատվություն չեն ներկայացրել Այգեպար և Պառավաքար համայնքները:

ՀՀ կառավարության 10.03.2015 թ. թիվ 234-Ն որոշմամբ մարզի համայնքներին նվազագույն աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացման, ինչպես նաև 1974 թվականից հետո ծնված նվազագույն աշխատավարձ ստացողների նպատակային սոցիալական վճարների հետ կապված, առաջացած լրացուցիչ ծախսերի փոխհատուցման նպատակով նախատեսվել է 235457.5 հազար դրամ, որից հատկացվել է 232534.4 հազար դրամ: Համայնքների կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն թվով 13 համայնքներ ունեն 7052.1 հազար դրամի տնտեսումներ, որից դեկտեմբերի 30-ի դրությամբ հետ է փոխանցվել 5301.9 հազար դրամ, իսկ Չինարի, Զորական և Պտղավան համայնքները ՀՀ պետական բյուջե փոխանցվող գումարները դեռևս հետ չեն վերադարձրել:

ՀՀ կառավարության 02.07.2015 թ. թիվ 766-Ն Կոթի համայնքին հատկացված 5.0 մլն. դրամ գումարը չի օգտագործել, որը ենթակա է վերադարձման ՀՀ պետական բյուջե:

Մարզի 62 համայնքներից 39 համայնքներ են հաստատել 2016 թվականի տեղական բյուջեները և սահմանված կարգով ներկայացրել մարզպետարան: Իսկ օրենքով սահմանված կարգով բոլոր համայնքների կողմից պետք է ս/թ դեկտեմբերի 25-ի դրությամբ տեղական բյուջեները հաստատվեին և ներկայացվեին մարզպետարան, որը ամփոփ պետք է ներկայացվի ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

<u>Առաջարկվեց.</u>

1. **<u>Այգեպար և Պառավաքար համայնքների ղեկավարներին.</u>**

Շտապ ներկայացնել տեղեկատվություն՝ հատկացված գումարների մուտքագրման վերաբերյալ:

2. **<u>Չինարի, Զորական և Պտղավան համայնքների ղեկավարներին.</u>**

ՀՀ կառավարության 10.03.2015 թ. թիվ 234-Ն որոշմամբ մարզի համայնքներին նվազագույն աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացման, ինչպես նաև 1974 թվականից հետո ծնված նվազագույն աշխատավարձ ստացողների նպատակային սոցիալական վճարների հետ կապված, առաջացած լրացուցիչ ծախսերի փոխհատուցման նպատակով նախատեսված գումարները շտապ հետ վերադարձնել:

3. 2015թ. դեկտեմբեր - 2016թ. հունվարի 11 ընկած ժամանակահատվածում ՀՀ Տավուշի մարզի միջպետական, հանրապետական և մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման ուղղությամբ կատարվելիք աշխատանքների մասին

/Զեկ.՝ Ա.Սարգսյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ/

Տավուշի մարզի Իջևանի, Բերդի, Նոյեմբերյանի, Դիլիջանի տարածաշրջաններում <Տավուշի ՃՇՇ> ՓԲԸ, <Լևոն երկրորդ> ՍՊԸ, <Հաղարծին> ՓԲԸ կազմակերպությունների կողմից սպասարկվում են 145.7կմ միջպետական, 321,0 կմ հանրապետական և 103,4 կմ մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհներ /ըստ տարածաշրջանների կցվում են ձմեռային պահպանման ենթակա ավտոճանապարհների ցանկերը/:

<Տավուշի ՃՇՇ> ՓԲԸ-ի կողմից Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանում ձմեռային պահպանման է ենթարկվում 139.2 կմ հանրապետական նշանակության և 43,9 կմ մարզային /տեղական/ նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ: Նշված աշխատանքներին ընդգրկվել են 4 ավտոգրեյդեր, 2 թրթուրավոր ձյունմաքրիչ /բուլդոզեր՝ բարձրլեռնային գոտում/, 5 ինքնաթափ, 1 բարձիչ և բանվորների տեղափոխման համար 2 տրանսպորտային միջոց: Նշված ժամանակահատվածում և առայսօր սահմանվել է շուրջօրյա հերթապահություն 5 աշխատողներով: Հ 30 - Թթուջուր - Նավուր - Հ36 ավտոճանապարհի վրա ուժեղ ձնաբքերի դադարելուց անմիջապես հետո սկսվելու են ճանապարհներիի մաքրումը, իսկ մաքրման տեխնիկապես անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում, նշված ճանապարհի փակման վերաբերյալ կհաղորդվի է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն:

<Հաղարծին> ՓԲԸ -ի կողմից Տավուշի մարզի Դիլիջանի տարածաշրջանում ձմեռային պահպանման է ենթարկվում 36,1 կմ միջպետական, 31,6 կմ հանրապետական նշանակության և 15,0 կմ մարզային /տեղական/ նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ: Նշված ժամանակահատվածում ընկերության կողմից ավտոճանապարհների վրա անընդմեջ կատարվելու են ձնամաքրման և մերկասառույցի վերացման աշխատանքներ: Նշված աշխատանքներին կընդգրկվեն 5 ձյունմաքրիչ և 5 ինքնաթափ, աղ և խարամ բարձող մեխանիզմներ և բանվորների տեղափոխման համար 2 տրանսպորտային միջոց: Կսահմանվի շուրջօրյա հերթապահություն 10 աշխատակիցներով: Տարածաշրջանի ավտոճանապարհները սպասարկվելու են ժամանակին, կգտնվեն բավարար անցանելի վիճակում: Ընդհանուր առմամբ մարզի պետական նշանակության ճանապարհահատվածները սպասարկվելու են ժամանակին /առաջնային մեծ ինտենսիվություն ունեցող միջպետական ճանապարհները, այնուհետև տարածաշրջանները միմյանց և մարզկենտրոնի հետ կապող հանրապետական ճանապարհները, այնուհետև համայնքներ տանող և սպասարկմանը ընդգրկված այլ ճանապարհները/, ահազանգներին և տեղ գտած թերություններին /օրվա ցանկացած պահին/ սպասարկող կազմակերպությունների կողմից արագ կարձագանքվի և հնարավորինս սեղմ ժամկետներում կվերացվի: Ներկա դրությամբ սպասարկող կազմակերպությունները բավարար ապահովված են համապատասխան աշխատակազմով, անհրաժեշտ նյութերով, վառելիքով, մեքենամեխանիզմներով, տրանսպորտային միջոցներով մարզում ձմեռային պահպանման աշխատանքները պատշաճ մակարդակով իրականացնելու համար: Ձմեռային պահպանման աշխատանքներին համայնքերի վարչական սահմաններում կաջակցեն նաև համայնքները /տեղական բնույթի հարցերի լուծման ուղղությամբ/:

Հանձնարարվեց.

Աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ Ա.Սարգսյանին.

– Իրականացնել հսկողություն ս/թ 4-րդ եռամսյակում նախատեսված և 2016թ. հունվար ամսին իրականացվող ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների ուղղությամբ:

Մարզի պետական նշանակության ավտոճանապարհները սպասարկող կազմակերպություններին.

Տարածաշրջանի ավտոճանապարհների սպասարկումը իրականացնել ժամանակին, սահմանել շուրջօրյա հերթապահություն համապատասխան աշխատողներով, ապահովել ճանապարհների բավարար անցանելիությունը, ապահովել սպասարկվող ճանապարհահատվածներին տրանսպորտի շուրջօրյա և անվտանգ երթևեկությունը համաձայն ճանապարհների պահպանման կանոնների, ձյան առատ տեղումների ընթացքում թույլ չտալ 5 սմ-ից ավել շերտի գոյացում, մերկասառույցի դեմ պայքարի համար ժամանակին կիրառել աղի և ավազի ցանումը:

Աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Գ.Բաղալյանին, քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ Ա.Սարգսյանին.

Հանձնարարականների կատարման վերաբերյալ 7-օրյա ժամկետում զեկուցել մարզպետին:

Հ.ԱԲՈՎՅԱՆ